ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 09 մարտի 2021թ.

2021 թվականի մարտի 09-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», «2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի բարձր ճնշման ջրագծի և ներքին ցանցի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին», ««Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին, ««Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ

Ավուշյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Ջինավոր Սարգսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»,
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»,
3. «2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին»,
4. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին»,
5. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին»,
6. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի բարձր ճնշման ջրագծի և ներքին ցանցի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին»,
7. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին»,
8. «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին՝ համաձայն հավելվածի,
9. «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին :

համայքնի ավագանու որոշմուների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու***

մասին» հարցի շուրջ Լ. Ավուշյանը ներկայացրեց, որ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով: «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին» N 06-Ն որոշման նախաբանում «հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N 20-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 5-րդ կետը և հավելված N2-ի 4-րդ կետը,» բառերը հանել:

Որոշման փոփոխությունը կատարվել է՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի թիվ 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ 24.12.2020թ. պետական փորձագիտական եզրակացությունը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 02-ի N 06-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Լիդիա Պողոսյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ *համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը*, 83-րդ հոդվածի 2-րդ մասը՝ *համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատում է ավագանին*, և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով ամրագրված դրույթները, որի հիմքում ընկած է հավաստիությունը և հստակությունը:

Կից ներկայացվում է Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը ներկայացրեց հաջորդ նախագիծը՝ «2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին»*:* Որոշման նախագիծը կազմվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝ *մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով,* սահմանված դրույթները:
Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» N 19-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի զարգացման ծրագիրը:

Սույն որոշման նախագծով առաջարկվում է հաստատել 2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Որոշվեց՝

հավանություն տալ «***2020 թվականին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Հաջորդ՝ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին»*** որոշման նախագծով առաջարկվում է հաստատել Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունը:

Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Բյուրեղավան համայնքի 2020թ. ՏԱՊ-ի բաժիններից է ՏԱՊ-ի մոնիտորինգի և գնահատման պլանը: ՏԱՊ-ի իրականացման տարեկան հաշվետվությունը կազմվել է մեթոդական ուղեցույցի համաձայն և մանրամասն ներկայացված են Բյուրեղավան համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Որոշվեց՝

հավանություն տալ ***«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվության մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Ս. Ղազարյանը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի (*Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ.)* և պայմանավորված համայնքում հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, կառուցված մայթեր ունենալու անհրաժեշտությամբ՝ ավագանին որոշում է հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը:

Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան, Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի ճանապարհների վնասվածության պատճառով տրանսպորտային միջոցների երթևեկությունը դառնում է անհարմար: Այդ և Բյուրեղավան բնակավայրի մայթերի և բակային տարածքների բարեկարգման խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել ճանապարհների և մայթերի հիմնանորոգման, բակերի բարեկարգման և կառուցման աշխատանքներ՝ ապահովելով հետիոտնի հարմարավետ տեղաշարժը և տրանսպորտային միջոցների երթևեկությունը, ինչը կստեղծվի բարեկեցիկ միջավայր:

Որոշվեց՝

հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում» ծրագիրը հաստատելու մասին»* որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի 6-րդ՝ *«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Զրաբեր բնակավայրի խմելու ջրի բարձր ճնշման ջրագծի և ներքին ցանցի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին»* որոշման նախագծի վերաբերյալ Ղազարյանը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և, պայմանավորված Զրաբեր բնակավայրում ջրամատակարարման ծառայությունների որակը բարձրացնելու անհրաժեշտությամբ, ավագանին որոշում է հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Զրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցում» ծրագիրը:

Բյուրեղավան համայնքի Զրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցը կառուցվել է դեռևս խորհրդային ժամանակներում, մաշված է և ունի մեծ կորուստներ: Կորուստների խնդիրը մեծ պարտքեր է առաջացնում բնակավայրին խմելու ջուր մատակարարող պոմպակայանի ծախսած էլեկտրաէներգիայի մասով, ինչը լրացուցիչ ծախս է համայնքի բյուջեի վրա: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել Բյուրեղավան համայնքի Զրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցման, ՕԿԶ-ի նորոգման և սանիտարական գոտու կառուցման աշխատանքներ: Ծրագրի իրականացումից հետո Զրաբեր բնակավայրի ողջ բնակչությունը կապահովվի որակյալ խմելու ջրով, ցանցում կբացառվեն ջրի կորուստները, ՕԿԶ-ն կունենա անհրաժեշտ սանիտարական գոտի, համայնքի բյուջեի վրա առաջացող լրացուցիչ ծախսերը կկրճատվեն և համայնքը հնարավորություն կունենա խնայված միջոցները ուղղելու այլ խնդիրների լուծմանը:

Որոշվեց՝

հավանություն տալ *«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով «Զրաբեր բնակավայրի խմելու ջրի բարձր ճնշման ջրագծի և ներքին ցանցի կառուցում» ծրագիրը հաստատելու մասին»* որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և, պայմանավորված բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակը

բարձրացնելու անհրաժեշտությամբ, ավագանին որոշում է Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով ***««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը***:

«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքի հետազոտությունների և միջամտությունների սենյակները, միջանցքները, ջեռուցման, ջրամատակարարման, էլեկտրական համակարգերն ունեն նորովի մոնտաժի և նորոգման կարիք, ինչը հնարավորություն չի տալիս հիվանդներին մատուցել բժշկական որակյալ ծառայություն: Պոլիկլինիկայի կողմից մատուցվող առողջության առաջնային պահպանման ծառայություններից օգտվում են Բյուրեղավան, Նուռնուս և Արզնի բնակավայրերի թվով 8783 քաղաքացիներ: «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վարչական շենքի հիմնանորոգումը, ապա կահավորումը կբարձրացնի բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայության որակը:

Որոշվեց՝

հավանություն տալ ***««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագիրը հաստատելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման ժամկետը և վճարի չափը)* համայնքի ղեկավարն առաջարկում է «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույք (տնտեսական գույք և էլեկտրական սարքավորումներ) և դրա պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել վերը նշված հիմնարկին:

Որոշվեց՝

Հավանություն տալ ***««Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին»*** որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի (*1. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:)* համայնքի ղեկավարն առաջարկում է «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային սեփականություն հանդիսացող գույք (տնտեսական գույք) և դրա պահպանման և սպասարկման ծառայությունների իրականացումը հանձնարարել վերը նշված հիմնարկին:

Որոշվեց՝

Հավանություն տալ ***««Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին»*** նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Խոշորացված Բյուրեղավան համայնքի, որի կազմում են երեք համայնքներ Բյուրեղավան քաղաքը, Նուռնուս և Ջրաբեր գյուղերը: 2020 թվականի համայնքի վարչական բյուջեի համախմբված եկամուտները ծրագրով նախատեսված 357673.3 հազար դրամի, որից Բյուրեղավան՝ 336939,7 հազար դրամ, Նուռնուս՝ 8544,4 հազար դրամ, Ջրաբեր՝ 12189.2 հազար դրամ, տարեկան ճշտված ծրագիրը կազմել է 449386.0 հազար դրամ: Փաստացի եկամուտը կազմել է 433010.9 հազար դրամ, որից Բյուրեղավան՝ 417470,9 հազար դրամ, Նուռնուս՝ 6692.6 հազար դրամ, Ջրաբեր՝ 8847,4 հազար դրամ՝ արձանագրելով տարեկան ծրագրային ցուցանիշի 3,6 % թերակատարում, որը կազմում է 16375"1 հազար դրամ:
Հաշվետու տարում հավաքագրած վարչական բյուջեի եկամուտների 102889,2 հազար դրամը կամ 23"8 %-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 76.2 %-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) հաշվին:
2020 թվականին համայնքում կապիտալ ծախսերի կատարման համար պետական բյուջեից ստացվել է կապիտալ ծախսերի սուբվենցիա 83256.0 հազար դրամ:

Գույքային հարկեր անշարժ գույքից

Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջե նախատեսված 48622,6 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 49620.3 հազար դրամ՝ կատարվելով 102"1 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել լրացուցիչ 5878,6 հազար դրամ:
Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների, փոխադրամիջոցների համար եկամուտների հաշվին նախատեսված 40969,3 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 41188,0 հազար դրամ՝ կատարվելով 100"5 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել լրացուցիչ 218,7 հազար դրամ:
Համայնքի տարածքում գտնվող հողերի հարկի գծով նախատեսված 7653"3 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 8432"3 հազար դրամ՝ կատարվելով 110"2 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել 779.0 հազար դրամ:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի հաշվին համայնքի բյուջե հաշվետու տարում նախատեսված 2579⍰5 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 2820.2 հազար դրամ՝ կատարվելով 109.3 %-ով, որի հաշվին բյուջե է մուտքագրվել լրացուցիչ 252.7 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ

Ընթացիկ տարում պաշտոնական դրամաշնորհները պլանավորված 330204.0 հազար դրամի դիմաց հատկացվել են 330121.7 հազար դրամ, կատարվելով 100 %-ով , որից դոտացիան

236964.2 հազար դրամ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումը՝ 9901.5 հազ. դրամ և պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ 83256,0 հազար դրամ:

Այլ Եկամուտներ

Այլ եկամուտները պլանավորված 67979"9 հազար դրամի դիմաց մուտքագրվել են 50448.7 հազար դրամ, կամ կատարվել է 74,2 %-ով, որի մեջ ներառված են՝
Գույքի վարձակալությունից եկամուտները կազմում են 7550.3 հազար դրամ, մուտքագրվել է 7339.0 հազար դրամ, ապահովելով նախատեսված եկամուտների 97.2 %-ը:
Վարչական գանձումները՝ նախատեսված 46192,0 հազար դրամ, մուտքագրվել են 27619.5 հազ. դրամ, կատարվելով 59.6 %-ը, թերակատարվելով 18572.5 հազար դրամով, որը պայմանավորված է COVID- 19 համավարակով, համայնքային ենթակայության մանկապարտեզի չաշխատելով, ինչպես նաև համայնքի Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի դիմաց վճարի և բոլոր բնակավայրերում աղբահանության վճարի հավաքագրման ցածր տոկոսով:

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտական դասակարգում

2020 թվականին համայնքի բյուջեի միջոցների հաշվին ծախսերի ֆինանսավորմանն է հատկացվել է 468466"9 հազար դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 86,1 %-ի կատարում:
Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հատկացվել է 269363"2 հազար դրամ, կատարվելով 89"2 %-ով, որը կազմում է ամբողջ ծախսերի 57.5 %-ը:
Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին է հատկացվել ընթացիկ ծախսերի 24160"9 հազ. դրամ կամ 27,9 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը (Էներգետիկ ծառայություն, կոմունալ ծառայություն, կապի ծառայություն, ապահովագրական ծախսեր, պայմանագրային և մասնագիտական ծառայությունների ձեռք բերում, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, նյութերի ձեռք բերում) հատկացվել է 29066⍰7 հազար դրամ կամ վարչական ծախսերի 9"0 %-ը, սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի ծախսերի 53,3 %-ը կամ 143614"1 հազար դրամ, դրամաշնորհ է հատկացվել 21159⍰8 հազար դրամ՝ կազմելով վարչական ծախսերի 7.9 %-ը, նպաստներ բյուջեից՝ 2570.0 հազար դրամ կամ 1"0 %-ը, այլ ծախսերին՝ 2789.3 հազ. դրամ կամ 1,0 % -ը:
Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 42.5 %-ը կամ 199103,7 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Ծախսերը ըստ գործառնական բնույթի ունեն հետևյալ տեսքը՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

2020 թվականի ընթացքում համայնքային բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ խմբի ծախսերը կազմել են 90560,5 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 21.3 %-ը, որի 89676.1 հազար դրամ կամ 99"0 %-ը ուղղվել է տեղական ինքնակառավարման մարմինների պահպանման ծախսերին, ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայությունների ձեռք բերմանը՝ 884,4 հազար դրամ կամ 1,0 %-ը:

Տնտեսական հարաբերություններ

Հաշվետու տարում ընդհանուր ծախսերի 92427,2 հազար դրամը կամ 21,3 %-ը ուղղվել է համայնքում տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Այս բնագավառում ներառված ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը, որը նախատեսված 41000,0 հազար դրամի դիմաց կատարվել է 44063,9 հազար դրամով՝ կատարվելով 107,5 %-ով: Ասֆալտապատման համար հատկացվել է նախատեսված գումարի 74834,4 հազար դրամը կամ նախատեսվածի 99,6 %-ը որն իրականացվում է սուբվենցիոն ծրագրով, ոռոգման ոլորտի համար հատկացվել է նախատեսված գումարի 100,0 %-ը կամ 17593,7 հազար դրամ, որը կազմում է համայնքի ներդրման չափը՝ նախատեսված «Տարածքային զարգացման հիմնադրամ»-ի հետ համատեղ իրականացվող համայնքի բնակավայրերում ոռոգման ցանցի նախագծման և վերակառուցման աշխատանքների:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2020 թվականին շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսված 76500.0 հազար դրամի դիմաց հատկացվել է 69023.9 հազար դրամ, որից 68737,9 հազար դրամը՝ աղբահանման, սանիտարական մաքրման, կանաչապատման և բարեկարգման համար և 286.0 հազար դրամը՝ թափառող կենդանիների վնասազերծման համար, ծրագրի կատարումը չի շարունակվել կապված համավարակի հետ: Այդ բնագավառի համար կատարվել է ամբողջ ծախսերի 16,3 %-ը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Բնակարանային կոմունալ ծառայությանը 2020 թվականին համայնքային բյուջեից հատկացվել է 61637,0 հազար դրամ, որից 4124.8 հազար դրամը ուղղվել է Ջրաբեր բնակավայրի բնակչության խմելու ջրի գծով ծախսերի մարմանը և 35591,3 հազար դրամը՝ Ջրաբերում խմելու ջրագծի կառուցման աշխատանքներին, որն իրականացվում է սուբվենցիոն ծրագրով, 20064,4 հազար դրամ հատկացվել է փողոցների լուսավորմանը, որից 2739.4 հազար դրամը հատկացվել է փողոցների լուսավորության համակարգի պահպանման, շահագործման համար և 17325,0 հազար դրամի ձեռք են բերվել նոր էներգախնայող լեդ լուսատուներ՝ համայնքի բնակավայրերում նախկին լուսատուները փոխարինելու համար:
Այդ բնագավառի համար ծախսվել է ամբողջ ծախսերի 14,5 %-ը:

Առողջապահություն

2020 թվականին այս բնագավառին է հատկացվել 49787,9 հազար դրամ, որն իրականացվել է սուբվենցիոն ծրագրով, վերանորոգվել է քաղաքային պոլիկլինիկայի տանիքը և բարեկարգվել բակը, որը կազմում է տարեկան ծախսերի 11.7 %-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2020 թվականին այս բնագավառին է հատկացվել 23535,7 հազար դրամ, որը կազմում է տարեկան ծախսերի 5.5 %-ը: Բյուրեղավանի «Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի պահպանմանը հատկացվել է 14152.9 հազար դրամ: Այդ բնագավառի համար հատկացված

միջոցներից 1390.2 հազար դրամը ուղղվել է քաղաքում սպորտային և մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար, 4612,9 հազար դրամի ձեռք է բերվել նոր գրասենյակային գույք մշակույթի շենքում գործող «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն»-ի և «Արվեստի դպրոց»-ի համար, 190,0 հազար դրամը հատկացվել է տարբեր տեղեկատվությունների ձեռք բերմանը, 2500,0 հազար դրամը՝ նվիրատվություն հիմնադրամներին:

Կրթություն

2020 թվականին կրթության բնագավառին է տրամադրվել բյուջեի միջոցներից 75103,9 հազար դրամ, որը տարեկան ծախսերի 17.7 %-ն է: Համայնքում գործող մեկ նախադպրոցական կազմակերպության պահնպանմանը հատկացվել է ոլորտի համար նախատեսված գումարի 40.8 %-ը, կամ 30648,0 հազար դրամ: Արտադպրոցական կազմակերպության պահպանմանն է հատկացվել այդ բնագավառի համար նախատեսված գումարի 59.2 %-ը կամ 44455.9 հազար դրամ:

Սոցիալական պաշտպանություն

2020 թվականին պահպանել է համայնքի կողմից որդեգրված սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունը՝ նպաստներ և օգնություններ բնակչությանը, որը հաշվետու տարում կազմում է 6390,0 հազար դրամ կամ ամբողջ ծախսերի 1.5 %-ը, որից նպաստներ բյուջեից՝ 3750.0 հազար դրամ և 2640.0 հազար դրամ բարեգործական ճաշարանի գույքի վարձակալության համար: